





2.6
F-92

ԱՍԿԵՐԻ

ԱՌԱՋՎԱՅՐԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

X

ԹՎԱՅ ՈՒ ԿԲՈՒՅ

ՏՂԵՆ ԵՒ ԱՂՋԻԿԸ
ԱՆՑՈՂԱԿԱՆ ՀԱՍԱԿՈՒՄ

Թարգմ. Ա. Լիսիջեան

Յանելում - Լ. ՏՕՂՄԱՅԻ հաւաքած ըն-
դիր մաքերը կրթութեան մասին

610

33-FP

ԹԻՖԼԻՍ

11.03.2013

610
63-ԲՊ

20 ԱՄ 2010 52

«ՀԵՇԻՔ»-ի ՄԵՆԿՎԵՐԹԵԿՆ ԴՐԵԳԵՐՈՒՆ

X

612,6
F-92

ՅՈՒՆԻ ՅԻ ԵՎԼՈՒՆ

ՏՂԱՆ ԵՒ ԱՊՀԱԿԱԾ

ԱՆՑՈՂԱԿԱՆ ՀՕՍԱԿՈՒՄ

Թալլուզ. Ա. Լիսիջեան

1009



Յանելուծ. Լ. Տօլստոյի հաւաքած ընտիր մտքերը
կը թութեան մասին

Թ. Ի. Ֆ. Լ. Բ. Ա.
Ելեմանաց սպառակ Ա. Վ. Ա. Ա. Եղիկանեանի
1907

Գործադրանք
 Կամուրջային մասունքները
 Առաջակա գործադրանքները
 Առաջակա գործադրանքները
 Առաջակա գործադրանքները

Տ Ա. Ա. Յ

ԲԺ. Բովլ

Եօթը թիւը, ինչպէս յայտնի է, մի առանձին
 խորհրդաւոր գեր էր խաղում հին աշխարհի մարդկանց
 հայեացքների մէջ։ Մարդկային կեանքի մէջ էլ այդ
 թւին մի յատուկ նշանակութիւն էր տրւում։ Ամեն
 հօթներորդ տարին համարւում էր վճռական տարի և
 ցոյց էր տալիս մի արմատական յեղաշրջում, կեանքի
 մի նոր շրջանի՝ սկզբնաւորութիւն։ սպասում էին որ
 դրա հետ կարող են տեղի ունենալ զանազան վտան-
 գաւոր փոփոխութիւններ մարդուս գոյութեան մէջ։
 Հիմա էլ գեռ հօթը թիւը շարունակում է խաղալ իր
 գերը։

Մօտաւորապէս հօթը տարեկան հասակում երի-
 խան փոխում է կաթնատամները և ունենում է արդին
 առաջին մշտական ատամները, և առհասարակ այդ
 տարին կարծես մի սահման է մանկութեան և տղայու-
 թեան մէջ։ մանկանոցից երեխան անցնում է գպրոցա-
 կան դասարանը, ընտանիքի նեղ շրջանից ընկերների
 շրջանը, առաջին քայլն է անում դէպի շրջապատող
 կեանքի աղմկալից ոլորտը։

Այլ ես մի հօթնեակ տարի—և սկսում է կեանքի

նոր շրջան։ Տասնեհինգերորդ տարին տանում է արդէն տղայութիւնը դէպի պատանեկութիւնը։

Երրորդ հօմնամեակով վերջանում է պատանեկութեան շրջանը։ 21 տարուց սկսում է արդէն ափահասութիւն։

Բոլորս էլ գիտենք որ իրօք շրջանների բաժանումը չի կարող այլչափ ճիշտ լինել։ Մի մանուկ աւելի արագ է զարգանում, միւսը աւելի զանդագ, և յեղաշրջումներն էլ տեղի են ունենում աւելի վաղ կամ աւելի ուշ։ Զարգացումը արագացնող և զանդաղացնող պատճառները գտնուում են անհատի և ներքին, և արտաքին աշխարհի մէջ,—կեանքի շրջապատող պայմանների, ցեղի և տոհմի մէջ։ Հաստատած է, օրինակ՝ որ «անցողական շրջանը» քաղաքացիների մէջ աւելի վաղ է սկսում, քան թէ դիւզի բնակիչների մէջ, և տաք երկրում աւելի վաղ, քան թէ սասը երկրում։ Այսուամենայնիւ ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ տղաները պատանի են դառնում 15—17 տարեկան հասակում։

Փոփոխութիւնը իհարկէ չի կատարւում մէկ անդամից, այլ հետզհետէ զրեթէ աննկատելի կերպով, օրէց օր։ Բայց կողքից մտիկ տուղի աչքին այնպէս կարող է թւալ իրը թէ այդ յեղաշրջումը եղաւ զարմանալի արագ կերպով,—երբեմն մի քանի ամիս բացակայելուց յեալոյ յանկարծ չես էլ հաւատում թէ առջնդ կանգնած պատանին նախկին բեղ ծանօթ տղան է։

Անցողական շրջանի մասին ընդհանրացած է մի կարծիք իբր թէ այդ յեղաշրջման մէջ ասենաէտական

դերը խաղում են սեռական գործարանների ուժգին զարգացումը, հասունանալը և զրա հետ կապւած սեռական բնազգի արթնանալը։ Այս կարծիքը միակողմանի և մասակար է այն տեսակէտով, որ հեշտութիւն մը կարող է ծնողներին ու դաստիարակներին չափազանցացրած հասկացողութիւն ներշնչել սեռական գործարանների նշանակութեան մասին տղաների զարգացման զործում և մոռացնել տալ կամ աւելի թէ պակաս անտես առնել տալ նրանց կեանքի ուրիշ կողմէրը, որ ոչ պակաս ուշազդրութեան հն արժանի։ Ոչ մի կերպ չը դրժելով սեռական գործարանների նշանակութիւնը այս դէպքում, ես միայն պնդում եմ որ միայն սեռական բնազգի արթնանալը մեզ չի տալիս հնարաւորութիւն այդ հասակը հասկանալու և միայն նա չէ որ հիմք է կազմում այդ հասակը բնորոշող բուլոր երևոյթների։

Կեանքի բոլոր շրջաններում, բոլոր կենդանի էտիների մօա օրգանիսմի զարգացումը նպատակ ունի «զիֆիերենցիացիա», այսինքն իր նմաններից զանազանւելը, տարրերւելը, առանձնանալը։ Հէնց նոյն բնական ձգտումը, որը ստեղծել է այնքան բազմազան տեսակներ բուսական և կենդանական աշխարհներում, յատուկ է և մարդկանց։ ամեն մի անհատ ձգտում է առանձնանալ բոլոր ուրիշների շարքից, այսինքն՝ որքան կարելի է զարգացնել իր սեռական անձնաւորութիւնը գոյութեան կուի մէջ և ձեռք բերած առանձնայականութիւնները տալ յետնորդներին, իր տեսակը պահելու նպատակով։

Մարդկանց մէջ զահագանւելու, տարբերւելու այդ
ձգտումը աչքի է ընկնում հէնց այդ անցողական շըր-
ջանում և ընդգրկում է օրգանիսմի բոլոր կենսական
գործառութիւնները: Իսկ վերջինները կարելի է բա-
ժանել երեք գլխաւոր խմբերի. 1) բուսական (օրգա-
նիսմի մնունդ, աճում և զարգացում), 2) հոգեկան և
3. սեռական (բազմանալու) կեանքի գործառնութիւն.
Ներ: Ուրագծենք համառոտակի թէ թնչ է տեղի ու-
նենում անցողական հասակում այդ բոլոր երեք շրջան-
ներում, աչքի առաջ ունենալով գլխաւորապէս տղայի
օրգանիսմը:

Նախ և առաջ նկատում է որ ոսկորներն ու մը-
կանները սկսում են արագ մեծանալ, երկարանուլ, ա-
ւելի մեծ ծաւալ ստանալով և աւելի որոշ ձեւեր ընդու-
նելով. կլոր մանկական դէմքը աւելի շշշտակի գծեր
է ձեռք բերում, որոնցից կարելի է լինում զարգափար
կազմել ապագայ տղամարդի բնորոշ գծագրութիւննե-
րի մասին. մազերը մարմնի վրա մեծանում են. ձայնը
աւելի ցածր ուժքնութիւն է ստանում. ուսերը լայնա-
նում են, իսկ կուրծքի ծաւալը աւելանում է: Անկա-
նոն, մանրագայլ քալւածքը քիչ քիչ զառնում է աւելի
չափաւորւած, հաստատ: Ֆիզիքական ուժերի արագ
աճումը առաջացնում է աւելի ու աւելի մեծ պահանջ
նրանց գործադրելու, ծախսելու, և տղան ձգտում
է արագ ու ուժեղ շրջումներ և ամեն տեսակ ֆի-
զիքական վարժութիւններ անելու: Մի առանձին մէր
է երևան զալիս հետաւոր զքոսանքներ կատարելու,
ամեն տեսակ ֆիզիքական մրցութիւններ սարքելու,

նոյնիսկ ձգտում ամեն ինչ քանդելու, փշրելու, մի
բան, որ իսկոյն առաջանում է, եթէ չեն իմանում
տիրել ուժերի լիութեան այդ բոլորովին նոր, զեռ ան-
սովոր զգացմունքին:

Միաժամանակ աճում և զարգանում է նոյնպէս
ուղեղը, որ փոփոխութիւններ է առաջ բերում նաև
անհատի հոգեկան կեանքի մէջ: Առաջ տղայի միտքը
գլխաւորապէս զբաղւած էր զիտութիւններ ձեռք բե-
րելով, նրա պաշարը շատացնելով, իսկ այժմ զրա-
կողըն ծնւռում է ամբարւած նիւթի աւելի կամ պակաս
ինքնուրոյն մշակութիւն: Սկսւում է արդիւնաւէտ
մտաւոր գործունէութիւն. ամեն մէկը աշխատում է
օգտել ձեռք բերած գիտութիւններից, իր անհատական
յատկութիւնների համաձայն: Դպրոցն էլ օգտաւում է
այդ հանգամանքից և գրել է տալիս նրանց ինքնու-
րոյն շարագրութիւններ նախկին ընդօրինակւած աշ-
խատութիւնների փոխարէն:

Այդ հոգեկան փոփոխութեան արտաքին արտա-
յացտութիւններից մէկն է սովորաբար լինում նոյնպէս
ըննադատական վերաբերունքը դէպի շրջապանը:
Տղան աշխատում է այս և այն բանը քննադատել և քանի
աւելի ու աւելի է վարժութեան շնորհիւ զարգացնում
իր մէջ այդ հակումը, այնքան աւելի և աւելի հակա-
միտ է լինում չափազանցնելու իր ուժերն ու ընդու-
նակութիւնները: Նա սուր աչքով իսկոյն նկատում է
մեծերի թոյլ ու ծիծաղաշարժ կողմերը, իսկ ինքնա-
քննադատութիւնը դեռ շատ քիչ է զարգացած լինում,
և այդ պատճառով նրա կարծիքները մարդկանց մասին

միշտ լինում են միակողմանի: Պատահում է որ նա հակասակ սխալանքի մէջ է ընկնում և կուրօրէն յափշտակում է այս կամ այն մարդով, չը տեսնելով նըրս թերութիւնները: Այս երեսիթը շաղկապւած է այն բանի հետ, որ այդ շրջանում սկսում է մեծ զեր խաղալ նաև զգացմունքը: Տղաները հանդիսաւոր կերպով հասպատում են ընկերական կապեր, յափշտակում են գեղարւեստով, մանաւանդ բանաստեղծութեամբ, և ձգտում են իրենք էլ «ստեղծագործել»: Այդ փորձերի արդինքը մեծ մասմբ լինում են քնարերգական գրւածքներ: Եւ այդ ամենը անօգուտ չի անցնում ապագայի համար:

Արագ զարգանում է այդ հասակում նաև կամքի ուժը: Առաջւայ պէս տղան հեշտ չէ կուրօրէն հնագանդում, նրա մէջ երեսն է վալիս ինքնակամութիւն, յամառութիւն: Անզգոյշ, անմիտ խստութիւնը կարող է հեշտութեամբ առաջացնել մի կատարեալ ըմբռուսութիւն ամեն աեսակ հեղինակութիւնների և եղած կարդ ու կանոնների դէմ, որ մի անուղղելի մխաս է տղագայի համար: Բայց հէնց այդ հասակում զարգանում է արմատ է բանում ամեն բարի և լաւ հակումը,—դուցէ նոյն իսկ շատ աւելի ուժեղ չափով, քան թէ սովորաբար կարծում են:

Այստեղ պէտք է յիշատակենք և այն, որ առաջւայ տղայական երազանքներն ու անուրջները կեանքի ապագայ ասպարէզի մասին զանում՝ են այդ հասակում աւելի խելացի ու փոխում են աւելի հիմնաւոր

ծրագիրների, համաձայն տղայի անհաստականը հակումների և ընդունակութիւնների:

Վերև ցոյց տւած ֆիզիքական և հոգեկան զարգացման կից նկատելի է դառնում նաև սեռական բնազգի զարգացումը.

Մանուկ հասակում սեռական տարբերութիւնը ոչնչով չի արտայայւում. տղաներն ու աղջիկները խաղում են միասին՝ որպէս ըոլորովին հաւասարներ: Մի փոքր յետոյ այդ տարբերութիւնը աւելի ու աւելի է որոշում. տղաներն ու աղջիկները կարծես երկու հակառակ բանակների բաժանւելիս լինեն, տղաները նայում են աղջիկներին վերևից, արհամարհում են «աղջիկներին» նրանց թուլութեան, սնափառութեան, պձնասիրութեան համար և այլն, իսկ աղջիկները «աղաներին» կոպիտ, անտաշ, անկիրթ են գըտնում:

Անցողական շրջանում, երբ սեռական գործարանների հասունանալովը սեռական բնազգն էլ է ծնուռմ, յարաբերութիւնները կրկին փոխում են: Տղաները հետզհետէ զագարում են աղջիկներին նայելու, որպէս աւելի ստորին կամ թշնամի արարածների, սկսում են հետաքրքրւել նրանցով, ցանկութիւն են ունենալու նըրանց ընկերութեան մէջ մնալու, բայց միենոյն ժամանակ զգում են մի տեսակ ամօթիածութիւն: Այդ միջոցին նրանք սկսում են արտայայտել աղջիկների վերաբերմամբ նաև բնաւորութեան ասպետական գծեր, օգնելու ձգտում, հովանաւորելու ցանկութիւն, նրանց երեակայութիւնը լցում է իդէալական կանացի պատ-

կերներով, որ սկզբում առնւած են լինում գլխաւորապէս զրականութիւնից:

Հոգեկան կեանքի այս փոփոխութիւնները անկատկած կապ ունեն սեռական զործարանների զարգացման և հասունանալուն հետո: Հոգու անդիաակից աշխարհի խորքից սեռական բնազզը հետզետէ երես է գտիս: Առաջ են զալիս հասկացողութիւններ և զգացմունքներ, որոնք ասում են թէ մարդկային ցեղը երկու սեռի է բաժանուում, և տղայի մէջ զարթնուում է արական անհատը: Այս արթնացումը նօրմալ անհատների մէջ ունենում է մաքուր կուսական բնաւորութիւն: Նուրբ հոգեկան կազմութիւն ունեցող տղաները սովորաբար դոգուում են իրենց ներքին կեանքի վրա և իրենց մէջ փակւում, և շատ ու շատ ցաւալի է լինում, եթէ ըլջապատոզ հասակաւորները կամ վատ ընկերները վաղաժամ պատուում են կոպիտ ձեռքով այն քնքուշ պատեանը, որ չիւսում են նրա անրջոտ երազանքները և որից վերջը պիտի դուրս թռչի սիրոյ թիթեոը, խաղաղ հասունանալով այդ պատեանի հովանու տակ:

Սեռական տեսակէտից ամենավտանգաւոր ժամանակամիջոցը ի հարկէ պատանեկական տարիներն են. բայց պատահում է դժբախտաբար, որ իդէալական մաքրութիւնը, կուսութիւնը խախտում է դեռ անցողական հասակում և նոյն իսկ աւելի վաղ: Դրա պատճառը լինում են երբեմն ժառանգած հակումները, երբեմն էլ վատ օրինակները: Այս գէպը սուաջւայթարմ, կենսուրախ տղանգառնամը է գունատ, քնատ, աշխատելու անընդունակ: անմաքուր խիդը ստիպում

է նրան հայեացքը ցած զցել, և արտաքինի ու բնաւորութեան մէջ երեան եկող այս փոփոխութիւնը պարզ ցոյց է տալիս, որ բանը բուրդ է:

Եթէ հիմա ի մի ժողովներ անցողական հասակի բոլոր առանձին գծերն ու առանձնայատկութիւնները, այնպէս որ մի ընդհանուր պատկեր ստացվի, — նախ և առաջ մեր աչքը կընկնի մի բնորոշ գիծ — ներգաշնակութեան պակասութիւն: Յամենայն գէպս, ժամանակակից քաղաքակիրթ հասարակութեան տղաների մեծ մասի (եթէ չասեմ բոլորի) համար պէտք է պակել, որ նրանց զարգացումը չափազանց անհարթ է ընթանում: Մինչդեռ նրանք հոգեկան կամ ֆիզիքական կեանքի որ և է մէկ կողմը արագ աճում ու զարգանում է, միւս կողմի զարգացումը կանգ է ասնում կամ դանդաղ է առաջ զնում: Շատ սովորական երեսիթ է, որ տղան, օրինակ, արագ «ձգւում» է դէպի վեր», մինչդեռ նրա ամրող կազմաձքը առաջւայ պէս մնում է նիւար ու բարակ երկար ու նիւար ձեռները ընդհանրապէս տալիս: Են նրան ինչ որ կոտրւած, տգեղ տեսը: Յածը ձայնի մէջ յանկարծ մի բանի զիլ, սուր հնչիւններ են լաւում, մի բան, որ ծիծաղալիք է դարձնում նրա ձայնը, — յաճախ այդ ձայնը համեմատում են ջանել աքլորիկների ձայնի հետ: Մտաւոր զարգացումը մի քանի գիտութիւնների մէջ շատ լաւ է ընթանում, միւսների մէջ շատ զանգաղ: Մի քանի «փայլուն գըլութիւններ», որոնք ստորին գուստաններում առաջին աշակերտներ էին, այդ տարիներում նսեմանում, թուլանում են, և ընդհակառակը՝ առաջ բթամիտ, ետամաց

համարւածները յանկարծ կարծես զարթնում են քնից, բացւում են և արագ ուրիշներից առաջ են անցնում: Մի քանիսը դառնում են շատ զգայուն, միւսները՝ մելամաղձում. մի քանիսի մէջ հիւանդու ամօթխածութիւն է երկում, միւսների մէջ կարծես թէ բթանում է բարոյական զգացմունքը: Ե՞էկի մէջ սեռական բնադրը ուշ և դանդաղ է զարթնում և թոյլ կերպով է արտայայտում, միւսի մէջ՝ չափազանց վաղ, արագ և ուժգին: Բայց բոլորն էլ ձգտում են առանձին անհատ դառնալու, անջատելու, բաժանելու ամրութից, կազմակերպելու իր անձնաւորութիւնը: Այդ «ինքնասիրահարութիւնը» յաճախ ստանում է չափազանցրած ծաւալ, անհամակրելի ձեռք, իսկ անբարենպաստ պարագաներում կարող է ընդհարութիւնը առաջացնել շրջապատողների և հասարակութեան հետ, որ երբեմն անուղղելի հետեանքներ է ունենում:

Փամանակով բոլոր անհարթութիւնները հետպհետէ վերանում են: Զարգացման տեսակէտից ետացած գործարանները հասնում են առաջացածներին, և կամաց կամաց տղայի ամրող մտաւոր և ֆիզիքական պատկերի ծիծաղաշարժ բնաւորութիւնը անհետանում է, և առաջ է գալիս պատանու գրաւիչ պատկերը.

Հասակաւորների պարտականութիւնն է, թէ ընտանիքում և թէ դպրոցում, պահել պահանել անցողական շրջանի մէջ գտնւող տղաների մարմնական ու հոգեկան առողջութիւնը, նպաստել որ նրանց ֆիզիքական զարգացումը ընթանայ կարելին չափ հաւասար, կանոնաւոր ընթացքով, ձեակերպող մարմիննե-

րըն ու հոգիները չաղջառւեն ու վայրի ոստեր չարձակեն: Միենոյն ժամանակ պէտք է միշտ յիշել, որ այդ շրջանի բնորոշ գիծը անհաւասարակշռութիւնն է, և այդ պատճառով ծնողներից ու գաստիարակներից պահանջւում է առանձին ներողաժտութիւն և փափկանկատութիւն: Վայրի ոստերը, վասակար ձիւղերը պէտք է հեռացնել, բայց այնպէս, որ աճումը, զարգացումը չը վնասի:

Այդ հասակում տղաները առատ մնունդ են պահանջում: Այդ պահանջը այնքան մեծ է լինում, որ երբեմն ուղղակի անձունի ձև է ստանում, և շրջապատողներն ու ծնողները սարսափում են արդ տեսակ «գայլի ախորժակից» ինքն ըստ ինքեան պարզ է, որ պէտք է սահանձարել մնունդի պահանջի այդպիսի կոպիտա, զուտ անասնական արտայալութիւնը, բայց, միւս կողմից, չը պէտք է մոռանալ, որ այդ շրջանում սընունդը ոչ թէ միայն պիտի մարմինը պահպանի, այլ և բաւականաչափ նիւթ մատակարարի բոլոր գործուրանների արագ աճման համար: Այդ պատճառով պէտք է միայն ուրախանալ տղայի մեծ ախորժակի համար, դա շատ բնական երևոյթ է, ախորժակի չը լինելը միայն առողջութեան խանգարման նշան է: Բոլորովին հարկաւոր չէ որ կերպակուրը շայլ կամ հարուստ լինի: Հարկաւոր է միայն առատ և սննդարար ուտելէդէն: Պէտք է խորս տալ թունդ հասնեմունքներից և զրգարդ նիւթերից և խմբչչներից, մանաւանդ՝ ալկօնոլից և ծխախոտից: Տղաներին կարելի է պահել սպիրտեղին գործածելուց և ծխելուց ամենից շուտ խելացի, հա-

մողիչ բացատրութիւններով, զրոյցն երով: Խիստ արգելու մները, սաստումները երբէք չեն օգնում: Մի քանիսի մէջ դրանք առաջացնում են իրենցն անելու յածառ ցանկութիւն: Իսկ զգայուն սիրտ ունեցող, լաւ տղայի հոգում այդ սաստումը կարող է աւելորդ կերպով խղճի խայթոցներ արծարծել, եթէ երբ և է ողատահար նա զանց առած լինի այդ պատւերը:

Առատ մննդասութիւնը պահանջում է նաև համապատասխան բացողեայ շարժողութիւն: Պրանով պահպանում է տղայի առողջութիւնը և ելք է ստանում ամբարւած կենսական եռանդը: Եւ եթէ այդ միջոցին տղաները աւելի են աղմուկ հանում, գոռում գոչում, քան թէ իսկապէս անհրաժեշտ է, չըպէտք է շտապել իսկոյն և եթ նրանց կանգնեցնելու, քանի որ վայելչութեան սահմանից չեն անցնում և մանաւանդ քանի որ աւելի թոյլերը այդ միջոյին չեն տուժում աւելի ուժեղներից: Եթէ բանը այդտեղ հասնի — հուսակւորների միջամտութիւնը անհրաժեշտ է, մարդասիրութեան վեհ սկզբունքը պաշտպանելու համար:

Շատ կարեոր է ընտելացնել տղաներին որ իրենց մարմինը մաքուր պահեն և պահպանեն, մի բան, որի կարեոր նշանակութիւնը նրանցից շատերը չեն հասկանում.

Կարեոր է նոյնպէս հետեւ որ տղաները բաւականաչափ քնին: Քունը անազին նշանակութիւն ունի նաև անցողական, որպէս և մանկական հասակում:

Բայց ամենակարեորն է այնուամենայնիւ սիրտոժար ուշիմ վերաբերմունքը գէպի նրանց հոգեկան

կեանքը և այդ վերաբերմունքից ըդխող հասկացողութիւնը: Մանաւանդ պէտք է խոյս տալ նրանց ծագրիւուց: Այն, ինչ որ հասակաւորի աչքում կարող է ծիծաղաշարժ և անմիտ երեալ, տղայի աչքում կարող է շատ լուրջ, կարեոր լինել: Իսկ երբեմն էլ այնպէս է լինում, որ առարկան ծիծաղաշարժ է դասել միայն տղայի շփոթութեան կամ անվարժութեան շնորհիւ, ինքը սսկայն իրօք խորին, որոշ նշանակութիւնը ունի:

Ամենից յաձախ, զգացմունքների աշխարհումն է երեան գալիս տղայի սխալ կերպով վերաբերելը առարկաներին, և այդպիսով նա մի տեսակ կօմիկական կամ նոյն իսկ անբնական տպաւորութիւն է թողնում: Այդտեղ է որ ամենից աւելի պիտի արտայայտի մայրական համբերութիւնն ու ներողամտութիւնը: Ծալրը միայն կը ստիպի տղային փակւելու իր ներքին աշխարհի մէջ և վստահութիւնը կորցնելու: Մինչև անգամ ակներկ անհեթեթութիւններին պէտք է վերաբերել մեզմ լրջութեամբ: Իսկ երբ տղան կը հասկանայ իր սիրալը կամ թեթեամտութիւնը, բարեմիտ կատակը կարող է արդէն օգտաւու լինել:

Տղայի մէջ ծնւում է ինքնուրոյն Ներպով գործելու ցանկութիւն, և պէտք է այդ ձգտումը խրախուսել: Թոյլ տւէք տղաներին ասել ամենը, ինչ որ սրտումը ունեն, և այնուհետև տւեցէք նրանց պատւէրներ՝ համաձայն նրանց հակումների և ընդունակութիւնների: Նրանցից շատերի գլխուրում վաղ և արթնանում զանազան ծրագիրներ ապագայ գործու-

նէութեան վերաբերմամբ, և այդ մասին զրոյցները
կարող են նպաստել նրանց հասկացողութիւնների պար-
զաբանելուն և նրանց մէջ աւելի ճշմարիտ հայեացք-
ների կազմակերպելուն, թէ ինչպէս պէտք է վերա-
բերեն հասարակութեանն ու մարդկութեանը: Կամաց
կամաց տղաները կը ոկտին իրենց՝ ապագայ քաղաքա-
ցի զգալ. նրանց մէջ երեան կը գայ մի որոշ յար-
դանք պէտի իրենց անձը և գիտակցութիւն՝ թէ ինչ
մեծ բարոյական նեցուկ է տալիս անձնաւորութեանը
պատասխանաւութեան զգացմունքը:

Այն տղաներին, որոնք ցոյց են տալիս առանձին
ընդունակութիւն կամ յառուկ հետաքրքրութիւն, պէտք
է աշխատել տալ այդ տարիներում մասնագիտօրէն
զարգանալու կամ կրթելու հնարաւորութիւն, միայն
թէ ի հարկէ այսպէս, որ այդ չը խանգարի կրթու-
թեան և ուսման ընդհանուր ընթացքին:

Եթէ տղայի մէջ երեւում է ցրւելու, այս ու այն
բանով պարապելու հակում,—մի բան, որ յաճախ է
պատահում, այդ տարիուն,—կամ եթէ տղան ոչ մի
յատուկ հետաքրքրութիւն ցոյց չի տալիս, սաստիկ
դանդաղամբ է կամ ծոյլ, շրջապատող հաստիաւոր-
ները առանձնապէս պարտական են ջանալ նրա կամքը
ամբապնդելու, ընտելացնելու որ մի գործով պարա-
պի, մի նպատակի վրա կենտրոնանայ, պարտական
են նրան այն տեղը հասցնել, որ նա զգայ այն հոգե-
կան գւարձութիւնը, որ առաջանում է բարեխզմօրէն
կատարւած աշխատանքից: Իսկ այդ ամենին հասնել
կարիքի է միայն համբերութեամբ և գգւանքով. խըս-

տութիւնը, գիւրագրգութիւնը: ՀայՀոյանքը ըանի
պէտք չեն գալ:

Եթէ առհասարակ տղաներին այդ տարիքում
շրջապատում է հոգատար, խելօք ուշագրութիւնը, ե-
թէ նրանց ժամանակը լցւած է կանոնաւոր, առողջ
~~պարապմունքներով~~ հաստատ յօյս կարելի է ունե-
նալ որ սեռական հասունութեան շրջանը կանցնի հօր-
մալ և անհկատելի կերպով զանազան բնաւորութիւն-
ների համար: Ծնողների և դաստիարակների գլխաւոր
հոգսերից մէկը պէտք է լինի այն, որ պահեն պահ-
պանեն տղաներին վատ օրինակներից և վատ, երեա-
կայութիւնը փչացնող գրքերի ընթերցանութիւնից:

Տղաների և աղջիկների ընկերութիւնը—որոշ հս-
կողութեան ներքոյ.—թէ ուսման ժամերին, թէ ազատ
միջոցներին, խաղերի, փիղիքական վարժութիւնների,
զւարձութիւնների ժամանակ անպայման օգտաւէտ է.
ուրիշ սեռի ներկայացուցիչների հետ մերձաւոր շը-
փումը ամենօրեայ առողջ պայմաններում թոյլ չի տայ
որ տղայի ուղեղի մէջ ծնւեն զանազան կեղծ, վաւա-
շուած և գրգռւած պատկերներ և հասկացողութիւն-
ներ. բացի այդ, չափազանց ամաչկոտ և «վայրենի»
տղաները մի փոքր բժշկում են իրենց վայրենութիւ-
նից, իսկ չափազանց աշխուժները, կայտաները սո-
վորում են իրենց զսպել աղջիկների ընկերութեան մէջ:

Սեռական կեանքի հարցերին աւելի լաւ է, եթէ
հարկը չի ստիպում, ձեռք չը տալ տղաների հետ խօսե-
լու ժամանակ, սեռական բնազգի արքաների գործութիւնները
բագացնելու համար: Ուրիշ բան է, ուրիշ պահանջման գործութիւնները գործութիւններ են:

7/11 1922

Հ. ԱՅԱՍՏԻ. ԽԱՆԱԿԱՆ
ԱՐՄԵՆԻԱ. ԽԱՆԱԿԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

նում էք, որ այդ բնագգը արգէն զարթնել է և պատրաստ է արտայայտւելու կամ արտայայտուում է ոչ ցանկալի ձեռքով,—այն ժամանակ միջաստութիւնը ծնողների և դաստիարակների սրբազն պարտականութիւնն է. լաւ է նոյնպէս դիմել բժշկի աջակցութեանը: Այդպիսի գէպքերում առանձնապէս կարևոր է առաջուց միջոցներ ձեռք առնել, որ տպան չենթարկի վատ ազգեցութեանը, հոգեպէս կը գոյթակզեի, շփոթութեան մէջ ընկնի տգէտ հայեացքների շնորհիւ. պէտք է գործին նայել պարզ աչքով, մտերմար օգնել տղային, որ իրեն ձեռք առնի:

Ա. Վ. Զ. Բ. Ա

Տիկ. Նիլսէն

Ենցողական հասակը կոչւում է նոյնպէս վճռական հասակ. նրա վրա սարսափելով է նայում թէ ընտանիքը և թէ դպրոցը: Ի հարկէ: Սիրելի, հստականդ, վստահամիտ երեխաների ամրող դասարանը կարող է գառնալ յանկարծ յամառ, ծոյլ և ինքնակամ պատանիների մի խմբակ: Այդ տարիքը արտաքին և ներքին յեղաշրջման հասակն է, մեծ յեղափոխութեան շրջան մարդու թէ ֆիզիքական և թէ հոգեկան աշխարհում: Երեխան պատրաստում է հասա-

կաւոր մարդ դասնալու. Ամբողջ մարմինը կարծես կազմալուծում է, ոտներն ու ձեռները չափազանց երկարանում են, և երեխան ուղղակի չը գիտի թէ ինչ անի նրանց. շորը կախւած է ուսերից տոպրակի պէս, շրժումները անձոռնի են, ամրող կազմւածքը կրուծ է անհաստատութեան. աններդաշնակութեան, փոփոխականութեան գրոշմ: Ենրբուստ էլ նոյն փոփոխականութիւնը, աններդաշնակութիւնը, անհաստատութիւնը: Ծնունդ են առնում նոր մտքեր և որ գլխաւորն է, նոր զգացմունքներ և ձգտումներ. Նախկին շահերը նոր շահերին է տեղի տալիս, և մեծացող աղջիկը լարւած ուշադրութեալր, հետաքրքրութեամբ նայում է հաստկաւորների աշխարհի ներսը:

Այդ միջոցին առանձնապէս անհրաժեշտ է որ շրջապատող հասակաւորները կարեկից, ոշիմ կերպով վերաբերեն աղջիկներին: Պէտք է աչքը բաց պահել, հետեւ նրանց, դիտել, այնպէս սակայն, որ նրանք չը նկատեն որ իրենց հետեւմ են:

Առաջները սարսափով, ահ ու գողով էին մտածում այդ հասակի մասին ֆիզիոլոգիական տեսակետից, և աղջիկների վրա նայում էին գրեթէ որպէս հիւանդների վրա: Երբէք չէին խրախուսում, որ աղատ շրժումներ անեն բացօքեայ, մասնակցեն ֆիզիքական վարժութիւններին, և աւելի պահում էին տանը հանգիստ, «աղջիկներին վայել» զբաղմունքներ տալով: Զարմանալի չէ, որ այդպիսի կրթութիւն ստանալով մանկութեան ժամանակը՝ աղջիկները անցողական շրջանն էին մտնում սակաւարիւն, ներդաշյին դրու-

թեան մէջ, որը յետոյ աւելի սաստկանում էր այդ հաստկում անմիտ պայմանների շնորհիւ: Դպրոցում այդ աղջիկներին աւելի էին տանջում զանազան նստակեաց պարապմունքներով, ընտանիքում շրջապատռում էին արհեստական հոգատարութեամբ և ներողամիտ էին վերաբերուում նրանց ֆիզիքական և հոգեկան թուլութիւններին, մինչդեռ այս տեսակ մթնոլորտը միայն աւելի է նպաստում սակաւարիւնութեան և նեարդայնութեան զարգանալուն: Յայտնի է որ այսպիսի հոգատարութեամբ վերաբերելով մի քանի հիւանդուարտայտութիւններին՝ միմիայն աւելի հնք սաստկացնում նրանց և քճքացնում ենք օրգանիսմը, մարմնը: Մի ժամանակ սովորութիւն էր բարձր շրջանում, որ տիկիններն և օրիորդները օրը անց էին կացնում բազմոցի վրա պառկած, և այդ մօղային հետեւելու այստեղը հասցրեց, որ այդ տիկիններից և օրիորդներից շատերը գրեթէ չէին կարողանում այլ ևս ոչ նստել ոչ էլ ման գալ:

Ոչ եթէ կայ մի հասակ կանաց կեանքի մէջ, երբ մանաւանդ նրանք չը պիտի շատ ուշագրութիւն դարձնեն իրենց ֆիզիքական կացութեան վրա, ականջ դնեն իրենց հիւանդու և անախորժ զգացողութիւններին, դա հէնց անցողական հասակն է: Ներշնչեցէր աղջկան որ անհրաժեշտ է հախազգուշութեան մի քանի միջոցներ ձեռք առնել սովորեցրէք առհաստարակ պահել պահպանել առողջութիւնը, և այսուհետեւ թող նրա մտքերը ուրիշ բանով պարապիւն:

իր սեփական անզուզական անձնաւորութեան շուրջը պառյատ գան:

Մեր ժամանակներում սակայն աղջիկների ֆիզիքական կրթութեան մասին ունեցած հայեացքը արդէն բաւականաչափ փոփոխւել է, և նրանք սկսել են աւելի բնական և առողջ կեանք վարել: Այժմ ծնողների ու զաստիարակների մտատանջութեան և հոգատարութեան առարկան գլխաւորապէս աճող աղջկայ հոգեկան վիճակն է:

Անցողական հասակում աղջիկների մէջ սովորաբար ծնւում է պճնասիրութիւն, սնամառութիւն, զուրգութիւն, կոկեառութիւն, և այդ հակումները ցոյց աւոզ աղջկայ հետ վարւելու զժւարութիւնը հէնց նրա մէջն է, որ այդ յատկութիւնները շատ սերս կերպով շաղկապւած են կնոջ բնական յատկութիւնն որից շատերի հետ, և այլ ևս նրա մէջ, որ մարդիկ երբեմն բոլորովին չեն էլ համարում այդ հակումները թերութիւն, այլ աւելի շուտով առաւելութիւն, կամ յամենայն զէպս բնական, աղջկան սապող յատկութիւն: Այս հալեացքի շնորհիւ աւելի զժւարին է կուել այս, քան թէ մնացած թերութիւնների դէմ, օրինակ՝ ստախօսութեան, զողամոլութեան և այլն դէմ, որոնք բոլոր քիչ թէ շատ կարգին ու խելքը գլխին մարդկանց կողմից համարում են վատ և ամօթալի:

Իմ կարծիքով, երբ կասկած է ծագում թէ բնչական պէտք է վերաբերել այս ինչ յատկութեանը և հարկաւո՞ր է արդեօք արմատախիլ անել նրան աղջկայ հոգուց, նախ և առաջ պէտք է քննենք, ինչ աղջեցու-

թիւն ունի այդ հակումը հէնց ինքն կազմակերպւող
առ ձնաւորութեան, նոյնպէս և ուրիշների վրա: Սկսենք
կօկեաութիւնից: Եթէ գուր գալու ցանկութիւնը կնոջը
ներելի և նոյն իսկ սազող յատկութիւնն համարելու
լինենք, ապա ի՞նչու կանանցից շատ շատերը չեն կա-
րողանում նայել արհեստով կօկեաունու վրա առանց
խորին զգւանքի և ամօթխածութեան զգացմունքի:
Առնենք սնափառութիւնն ու պճնասիրութիւնը: Մի
փոքր որ մտածելու լինենք, անպայման պիտի համա-
ձայնւենք, որ եթէ սնափառութեանը չը դիմագրենք,
նա կարողէ բոլորովին գերել կնոջն և աւերել նրա
սիրտն ու հոգին: Հազիւ թէ գտնւեն այնպիսի ծնող-
ներ, որոնք կամենային, որ իրենց աղջիկը դուրս գար
թեթեամիտ մի կին:

Այսպիսով կասկած չը կայ որ պճնասիրութիւնն և
դուր գալու ցանկութիւնը բոլորովին անմեղ հակում-
ներ չեն: Ուղիղէ, սրանք յատուկ են կանանց բնութեանը,
բայց քիչ բնական հակումներ կան ինչ է, որոնց դէմ
պէտք է մաքառել, որոնց պէտք է կրթել, ազնւացնել
յանուն մարդկային արժանաւորութեան: Եւ ահա եթէ
ծնողներն ու դաստիարակները կարողանային զպրոցի
չետ ձեռք ձեռքի տւած ազնւացնել վերը յիշւած հա-
կումները աղջկայ մէջ, պճնասիրութիւնը դարձնել գե-
ղցիկ բմբնում, սնափառութիւնը՝ ազնիւ փառասի-
րութիւն, դուր գալու ցանկութիւնը՝ շրջապատողներին
ուրախացնելու և բախտաւորեցնելու ցանկութիւն, որ
այնպէս յատուկ է բոլոր լաւ կանանց,—այն ժամանակ
պէտք բնական հակումները ապագայ կնոջ համար կը

դառնային բարիք և ոչ թէ չարիք:

Սակայն բոլոր աղջիկների մէջ չէ երեսում
անցողական հասակում կօկեաութիւնը, անափառու-
թիւնը և այլն: Աղջիկներից մի քանիսը, այն էլ ոչ
տգեղները, հէնց այդ հասակում ցոյց են տալիս սառ-
նութիւն, կոշտութիւն, արհամարհանք դէպի իրենց
արտաքինը, աչքը ծակող շարժւածքներ, չափազանց
բննադատական վերաբերմունք դէպի շրջապատողները,
մանաւանդ ծնողները, և թշնամական, նոյնիսկ ետ մզող
վերաբերմունք դէպի միւս սեռի ներկայացուցիչները:
Վայ այն մօրը, որը այնպիսի բարոյական բարձրու-
թեան վրա չի կանգնած, օժտւած չի այնպիսի հոգե-
կան յատկութիւններով, որ ակամայ յարգանք ներշնչի
ու չեղօքացնի ամեն մի այլպիսի բննադատութեան
փորձ: Ոչ որ աշխարհիս երեսին այնպէս անզութ,
խստասիրութեառով չի դատում, ինչպէս 14—15 տա-
րեկան աղջիկը իր մօրը: Միւս կսոմից՝ ոչ ոք և ոչ ոքի
աշխարհի երեսին այնպէս չի պաշտում, որպէս կրկին
այդ հասակի աղջիկը իր մօրը, եթէ սա կարողանում
է նրա քննադատութեանը զգմանալ:

Խելօք մայրը չի սկսի խրատներ կարգալ այդ
հասակի աղջկայ գլխին թէ ինչու է թշնամարքար վե-
րաբերում տղաներին, և նոյն իսկ կաշխատի պաշտ-
ումնել նրան աւագ քոյրերի և եղբայրների նկատողու-
թիւններից ու ծաղրանքներից: Նա զիտի որ կանցնի
մի քանի տարի ու աղջկայ ձեռին և վարողութիւնը
ինքն ըստ ինքնուան կը լւանան: Հոգեբանութիւնը
հասկացող մայրը նոյնպէս առանձնապէս չի անհան-

գստանայ, նկատելով այդ հասակի աղջկայ կողմից արտաքին սառնութիւն ու կոշտութիւն գէպի հայրը, եղբայրներ, քոյրերը և գուցէ հէնց գէպի ինըը, մայրը: Այդպիսի մայրը կը տեսնի այն, ինչ որ ուրիշը չի տեսնի. — սառնութիւն և կոշտութիւն արտաքին կեղեկ տակ նա կը նկատի անձնազոնութեան, անհուն սիրոյ կայծեր, ազնիւ ձգտումներ, որոնք չը գիտեն թէ որ կողմը ուզգւեն: Մայրը կը հասկանայ, որ այդ ուշացած գարունը ցրտից կաշկանդւած բողբոջներով՝ աւելի ծաղկաւէտ ու պաղարեր ամառ է խոստանում, քան թէ վաղաժամ գարունը, կահացի հրապոյրների իր փարթամ ծաղիկներով, սնափառութեան և դուր դալու արհեստական ջերմութեամբ:

Ի հարկէ մայրերից քչերին ալխորժելի կարող է լինել տեսնել աղջկայ արհամարհանը գէպի իր արտաքինը, բայց այս թերութեան դէմ առհասարակ աւելի հշշա է լինում մաքառել, քան թէ հակառակի դէմ, այն է՝ սիրունանալու, պճուելու ախտի դէմ: Դրա փոխարէն այդպիսի աղջիկը սովորաբար աւելի զարգացած է լինում ստաւորապէս, սաստիկ ընթերցաւէր և մեծերի լուրջ խօսակցութիւնների մոլի սիրահար: Երանի թէ ծնողները կարողանան նրա մտաւոր սովը յագեցնել: Խելօք, սիրող մայրը երբէք թոյլ չի տալ, որ աղջիկը իրենից բաժանւած լինի լուսութեան կամ անվստահութեան պատնէշով. նա միշտ կը համակըի աղջկայ ձգտման գէպի մտաւոր զարգացումը և զգուշութեամբ ուզգութիւն կը տայ այդ ձգտմանը այնպէս, որ աղջկանից դուրս գայ ներդաշնակօրէն զարգացած,

աղնիւ կանացի անձնաւորութիւն:

Աղջիկներից շատերը անցողական շրջանում ունենում են սիրային երազներ, մի քանիսը անմեղ, մասնկական, միւսները այնպիսի, որ մեզ կը սարսափեցնեն, — նայելով, խառնւածքին, տիմպերամենտին և շրջապատող պայշմաններին: Աւելի լաւ է որ մայրը հարց ու փորձ չտնի թէ ինչ երազ է տեսնել աղջիկը. այդպիսի պարզասրաւութիւնը տեղին ու բնական է աւելի շուտ հասկակիցների մէջ:

Բայց եթէ ծնողները նկատեն որ սիրային երազները չափազնց գրաւել են աղջկայ երեխկայութիւնը, մայրը ինարկ, պէտք է միջամտի, բացատրի աղջկան թէ ինչ է նրա մէջ կատարւում: Եւ փառք ու պատիւ այն մօրը, որ կը կարողանայ այդ անել այնպէս, որ միաժամանակ յարգանք ներշնչի գէպի մարդկային կեանքի այդ լաւագոյն գանձը: Պէտք է բացատրել աղջկան, որ նրա մէջ արթնացնող ընազդը արտայայտութիւն է այն ստեղծագործող ուժի, որ պահպուում է կեանքը երկրիս վրա, որին պարտական է իր ծագումը այն ամեն վեհն ու լաւագոյնը, ինչ որ մարզս ստեղծում է աշխարհիս երեսին: Ստեղծագործելու ընդունակութիւնը կենդանիներին էլ է արւած, բայց նրանց մօտ նա շատ սահմանափակ է. Նրանք կարող են միայն լոյս աշխարհ բերելնոր, իրենց նման էակներ: Դրա տեղ կենդանիները չեն էլ ի չարն գործ դնում աստւածային հուրը, իրենց արւած կենդանանար կայծը, ինչպէս որ մարդիկ են անում: Պէտք է զնահատել այդ ստուծածային մեծագոյն գան-

ձը և օգտւել նրանից, ինչպէս հարկն է, թէ չէ՝ իշարը գործածելուց պատիքը նոյնքան մեծ կը չինի, որչափ մեծ է ինքը այդ գանձը:

Անցողական հասակը յաճախ լինում է փոթորիկ-ների, լարւած կուի շրջան ծնողների և զաւակների մէջ: Զարմանալի բան է չէ: Մի այդպիսի ահազին յեղաշրջում հեշտ չի կարող կատարւել: Բայց եթէ ընտանեկան մթնոլորաը միշտ մաքուը է եղել և լցւած է եղել փոխաղարձ սիրոյ և յարգանքի ոգով, եթէ բարի սովորութիւններն են կազմիլ կրթութեան սազմը, այդ փոթորիկները շուտով կը խաղաղւեն, և երեխաները այդ խարխափան շրջանից աւելի խորին և աւելի գիտակից սէր և խանդաղատանք գուրս կը բերեն դէպի իրենց ծնողները:

ԵԵԿ. ՏՕԼՍՈՑԻ

ՀԱՄԱՐԱԾ

ԲՆՏԻՐ ՄՏՔՎՐԸ ԿՐԹՈՒԹԵԱՅՆ ՄԱՍԻՆ^{*)}

I

Կրթութեան հիմքը կրօնական ուսուցումն է, այսինքն՝ կեանքի իմաստի և կոչման պարզաբանութիւնը:

I. Կրթելու արևեստի հիմքը պիտի այն սկզբունքը կազմի, որը մանաւանդ պէտք է չը մոռանան առաջուց կրթական ծրագիրներ՝ կազմողները, այն է թէ՝ երեխաններին պէտք է կրթել աչքի առաջ ունենալով մարդկութեան ոչ թէ ներկայ, այլ ապագայ լաւագոյն կացութիւնը, այսինքն աչքի առաջ ունենալով մարդկութեան զաղափարը և նրա լիովանար կոչումը: Այդ սկզբունքը չափազանց կարևոր է: Իսկ առանապակ ծնողները իրենց երեխաններին այնպէս են կրթում, որ նրանք պիտանի լինեն ներկայ, թէկուզ և փչացած աշխարհին: Բայց նրանք պիտի աւելի լաւ կրթեն զաղակներին, որպէս զի այդ ձանապարհով ստեղծեն

^{*)} Քաղաքածք Լ. Տօլսոցի կազմած «Կրցը չտեհիա» գրքի «Երեք օր» գլուխց: Անստորագիր մտքերը պատկանում են իրեն և Տօլսոցին:

մարդկանց համար ապագայում լաւագոյն կացութիւն:
Լիանոս

2. Ապագայ, մեզնից աւելի կատարեալ սերնդին պիտանի մի մարդ կըթելու համար պէտք է նրան կըթել, աչքի առաջ ունենալով իդէալական մարդը, — միայն այն ժամանակ մեր սանիկը արժանի կը լինի այն սերնդին, որի հետ ստիպւած կը լինի ապրեւու:

3. Երեխային այն տեղը հասցնել, որ նա գիտակցի աստւածային բնութեան գոյութիւնը իր մէջ, ահա իմ աչքում ծնողներիու դաստիարակների բարձրագոյն պարտականութիւնը:

Զանինդ

4. Ճշմարիտ կըթութեան նպատակը ոչ թէ միայն այն է, որ ստիպենք մարդկանց բարի գործեր անեն, այլ և այն, որ դրա մէջ նրանք հաճոյը և ուրախութիւն գտնեն, ոչ թէ միայն մաքուր լինեն, այլ և սիրեն մաքութիւնը, ոչ թէ միայն արդարամէտ լինեն, այլ և փափագեն ու ցանկան արդարութիւնը:

Զօն ՈՒսուիլն

5. Կրօնական ուսուցումը կըթութեան հիմքն է, մինչդեռ մեր քրիստոնեայ աշխարհում ձևացնում են, իբր թէ լրջօրեն սովորեցնում են այն, ինչին որ ոչ չի հաւատում: Երեխաները սուր աչք ունեն և լաւ են տեսնում ու չեն հաւատում ոչ միայն այն բանին, ինչ որ իրենց սովորեցնում են, այլ և նրանց, ովքեր որ սովորեցնում են:

II

Ճշմարտասիրութիւնը ամեն տեղ, և մանաւանդ կըթութեան մէջ, ամենագլխաւոր պայմանն է:

1. Այն կրօնական ուսուցումը, որը իրեւ կեանքի իմաստի և կոչման պարզաբանութիւն, բաւարարութիւն էր տալիս մարդկանց մի հազար տարի առաջ, չի կարող գոհացնել մեր ժամանակւայ մարդկանց: Իսկ երեխաներին այժմ նախ և առաջ սովորեցնում են այն, ինչ որ մարդկանց ներքին պահանջներին բաւարարութիւն էր տալիս մի հազար տարի՝ առաջ, — դա մի սոսկալի սխալ է:

Երանի թէ կարելի լինէր երեխաներին այնպէս կըթել, որ ամեն անորոշ բան նրանց համար խսպառ անհասկանալի մնար:

Ասելու այն է, որ երեխաներին չը պէտք է ներշնչել, ինչպէս սովորաբար անում են, թէ ամենաանհաւասկան անահաւատութիւնները իրօք տեղի կարող էին ունենալ: Այդպիսի մտածողութիւն իւրացնելով՝ նրանք ընտելանում են անորոշ ու թերի պատճառաբանութեանը և հասկանալի են համարում անհասկանալին:

Լիխտենբերգ

2. Պէտք է երեխաներին հաղորդել միայն այն, ինչ որ նրանք կարող են այնպէս հասկանալ, որ հասկան տանելուց յետոյ այլ ևս ոչինչ չը կարողանան ուելացնել այդ հասկացողութեան վրա:

Յ. Ճշմարտասէր եղիք միշտ և մանաւանդ երեխայի հետ: Կատարիր խոստացածդ, այլապէս սուռթեանը կընտելացնս նրան:

Տալմուդ

4. Շատ լաւ կը լինէր քննել այն հարցը, թէ արդիօք վասակար չէ չափազանց յդկել երեխաներին կրթելու միջոցին: Մենք դեռ շատ քիչ ենք ճանաչում մարդուն, որ կրթութեան գործը չը վատահանանք պատահունքին, եթէ կարելի է այսպէս ասել: Հաւատացացած եմ որ եթէ մեր մանկավարժները կարողանային հասնել իրենց նպատակին, — ուզում եմ ասել՝ եթէ նըրանք կտրող լինէին կրթել երեխաներին բոլորովին այնպէս, ինչ չափում են, այդ գէպքում մենք ոչ մի մեծ ամրդ չենք ունենալ: Կեանքում՝ ամենաանհրաժեշտ բանը մեզ ոչ ոք չի սովորեցրել: Հասարակական դըպրոցներում, ուր բազմաթիւ երեխաներ ոչ թէ միայն սովորում են, այլ և գժութիւն են անում միասին, ու զիդ է չեն կրթում այնքան էլ շատ բարեպաշտ, «քաղաքավարի», «տաշւած» ամրդիկ՝ լինում հնոյն իսկ բոլորովին փչացողներ, — բայց մեծամասնութեան վրա այդ ազատութիւնը լաւ է ազգում:

Աստւած մի արասցէ, որ մարդ, որի ուսուցիչը ամբողջ բնութիւնն է, դամայ մի կառը մեղրամոմ, որի վրա իր մեծապանծ պատկերը գրոշմէր որ և է պրօֆէսօր:

Նիստնբերդ

5. Մի ասիլ դաստիարակողին և մանաւանդ սուրբ, անհերքելի ճշմարտութեան տեղ մի տալ նրան այն,

ինչին դու կամ բոլորովին չես հաւատում, կամ ինչի մէջ գոնէ կասկածում ես: Այդպէս վարւելը մեծողոյն յանցանք է:

III

Մանկական հասակը ներշնչման հասակ է: Ամբողջ կրթութիւնը բարւոյ ներշնչումն է:

1. Ներկայումս մարդկանց մեծ մասը միայն երեխայում է թէ բրիտանէութիւն գաւանելով՝ քրիստոնէական բարոյականութեանն է հետեւմ: Իրօք նըրանք միայն հեթանոսական բարոյականութեանն են հետեւմ և այդ բարոյականութիւնն են իդեալ գարձնում մատադ սերնդի համար:

2. Երեխաները ամենից աւելի ենթակայ են լինում ներշնչմանը մանկական հասակում: Դատողութիւնները մի հազարերորդը չունեն այն ազգեցութիւնից, որ ունի օրինակը: Ահա թէ ինչու զուր ու ծիծաղաշարժ են այն քարոզները, որ կարդացում են երեխաների գլխներին, եթէ նրանք բոլորովին հակառակ օրինակներ են ահենում իրենց աչքի առջի:

3. Երեխայի կրօնը կախւած է ծնողների գործելու, ոչ թէ խօսելու եղանակից: Նրանց ներքին և անգիտակից, կենսամուղ իդէալն է ազգում երեխայի հոգու վրա. իսկ խօսքերը, խրատները, պատիժները, սաստոմները նրա համար ոչ այլ ինչ են, եթէ ոչ կատակերգութիւն, մի որոտմունք, իսկ մեծերի հաւատը նա զգում և հասկանում է բնադրով:

Երեխան տեսնում է, ինչ ենք իսկապէս, այն բանի

տակից, ինչ որ ուզում ենք երեալ։ Զուր չի նա համարում լաւ հոգեսես։ Նա իր իշխանութիւնը տարածում է ամեն մէկիս վրա, ինչքան կարող է. նա հիանալի զիւնագէտ է։ Նա անգիտակցօրէն ենթարկւում է ամեն մէկիս ովզեցութեանը և արտացոլացնում է այդ աղբեցութիւնը, փոփոխելով իր սեփական բնութեան համենատ. նա խոշորացոյց է։

Ահա թէ ինչու կրթութեան առաջին սկզբունքը հետեւալն է—ինքդ քեզ կրթիր, իսկ առաջին կանոնը, որին պիտի հետեւենք երեխայի կամքին տիրելու համար,—տիրիր ինքդ քեզ։

Ամիս

5. Զբոսասէր կեռնք վարելու հակումը մարդուու կեանքի ամենամեծ գժբախտութիւնն է, ուստի չափանց կարեոր է, որ երեխաները շատ փոքր հասակից ընտելանան աշխատառքի։

6. Երեխաների համար ամենակարեորն է չափառութեան, պարզութեան, աշխատանքի ու ողորմածութեան սովորած լինելը։ Բայց ի՞նչպէս նրանք այս ամենը իւրացնեն, եթէ ամեն օր տեսնում են որ ծնողները շայլութիւն, պճնութիւն են սիրում և գերազանցում են անգործութիւնը աշխատանքից։

Ամբողջ բարոյական կրթութիւնը կախւած է լաւ օրինակից։ Լաւ ապրեցէք, կամ զոնէ աշխատեցէք լաւ ապրել, և զուք քանի աւելի կը աջողէր այդ բանում, այնքան աւելի լաւ կը մեծացիւ։ *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ*

7/II 1922

Ա. ԱՅԱՍԻ. ՅԱՅՆԻԿԱՆ

1.2.49

Հ. Մ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱՊՈԲԱՆԻ ՎՐԱՅԻ ՎԱՐԱՐԱՆ

ՀՀ Ազգային գրադարան



NL0262858

1779